

ԱՐՑԱՆԱՀԱՅ (ՂԱՐԱԲԱՂԻ) ԲԱՐՔԱՌԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

Խոսելով հայ բարբառների ծագման մասին և կանգ առնելով Ղարաբաղի բարբառի վրա՝ Շ. Աճառյանը գրում է. «Բարբառների ծագման ժամանակը որոշելու համար Ազուխի բարբառի նման և ավելի ցայտուն ձայնաբանական մի երևույթ ներկայացնում է Ղարաբաղի բարբառը: Այստեղ, ինչպես քիչ առաջ տեսանք, ք, գ, դ, ձ, ջ բաղաձայնները վերածվում են պ, կ, տ, ծ, ց: Բայց այս օրենքին ենթարկվում են միայն հայերեն բառերը, նրանք մեջ առնելով ասորերենից, հունարենից և պարսկերենից առնված փոխառությունները (հին փոխառություններ): Հմմտ. ջուխտ > ճօխտ, բրինձ > պրինձ, դարման > տէրման, գազար > կէզար են: Իսկ թուրքերենից փոխառյալ բառերը մնում են անփոփոխ. ինչպես՝ բազ «իշխան, եզ», դէօնըմ «անգամ», բօլ «բավական», ֆյասիբ «աղքատ», դէօշակ «անկողին»: Ձայնափոխության այս զանազանությունը ցույց է տալիս, որ օրենքը գործել է թուրքերի՝ Հայաստան գալուց առաջ և հետևաբար Ղարաբաղի բարբառի ծագումը ընկնում է նույնպես ժՐ գարուն»¹:

Շ. Աճառյանի տեսակետը հենվում է այն չափանիշի վրա, ըստ որի բարբառը իր հիմնական բաղադրիչներով կազմավորվում է մի որոշակի ժամանակահատվածում՝ գրեթե միանգամից: Այս տեսակետին հակառակ դեռևս 1959 թ. առաջ է քաշվել այն դրույթը, որ «հայերենի բարբառների հնչյունական, քերականական և բառապաշարային հատկանիշները ձևավորվել են հայերենի պատմության ողջ ժամանակաշրջանում՝ պատմական տվյալ պայմաններից կախված ուժեղանալով, թուլանալով կամ նույնիսկ ընդհատվելով և պատմական տվյալ պայմաններում տալով բարբառային տվյալ խմբավորումները»²: Այստեղից բխում է, որ՝ 1) յուրաքանչյուր բարբառ ժամանակագրորեն միատարր չէ, այսինքն՝ նրա տարրեր բաղադրիչներ գալիս են տարբեր ժամանակագրական շերտերից, 2) տարրեր բարբառների միևնույն հատկանիշները ձևավորվել են ոչ միանգամից, այլ աստիճանաբար՝ տարածվելով ըստ շփումների ուժեղության ու թուլության, որոշ դեպքերում էլ իրարից անկախ՝ ըստ միևնույն նախադրյալների առկայության և համատեղ միջավայրերի ազդեցության, 3) կան համընդհանուր, բոլոր լեզուներին հատուկ երևույթներ (հանրույթներ), որոնք կարող են գործել տարբեր՝ իրարից անկախ բարբառներում և տալ համանման արդյունքներ:

Ինչպես ամեն մի բարբառ, այնպես էլ արցախահայ բարբառը, ունի իրեն կարգի բաղադրիչներ՝ 1) ընդհանուր հայկական՝ հայերենին հատուկ, 2) մասնաբարբառային՝ բարբառների մի որոշ խմբի հատուկ և 3) եզակի՝ միայն տվյալ բարբառին հատուկ: Արցախահայ բարբառի այս երեք շերտերի առանձնադրման հատուկ փորձ չի կատարվել, թեև առանձին տվյալներ կան: Ինչն էլ նաև, որ եզակի համարվող երևույթները կարող են լինել ընդհանուր լեզվական ու մասնաբարբառային երևույթների մեջցումներ, և դրանք տարբերակումը այնքան էլ հեշտ չէ, եթե նկատի չունենանք արցախահայերի հետ անմիջական շփված նեղ միջավայրերի ազդեցության երևույթները:

¹ Շ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951, էջ 320:

² Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը, ՊՅԶ, 1959, № 6, էջ 311:

Կանգ առնենք այնպիսի մի երևույթի վրա, ինչպիսին բառակերպի հավելուրդային հ-ն է, այսինքն՝ գրաբարի բառակերպային ձայնավորից առաջ հ-ի առկայությունը: Հետաքրքրական է թեկուզ այն փաստը, որ հավելուրդային հ-ովս բառերը գերազանցապես բնիկ հնդեվրոպական ծագում ունեն և բացատրվում են հնդեվրոպական հոդի վրա, քիչ բառեր արտացոլում են իրանական համապատասխան տարբերությունները, որոշ բառեր էլ անհայտ ծագման են:

Քննարկենք նախ հնդեվրոպական ծագման բառերը:

1) Սրանք մասամբ արտացոլում են հնդեվրոպական բառակերպային *k, u ք, *s բաղաձայնները: 2. Աճառյանը խոսելով Ղարաբաղի բարբառի ուշ կազմավորման մասին, ավելի վաղ արտահայտել է հետևյալ միտքը. «Աստուք (հ-ով ձևերը—9. 2.) հատկապես հետաքրքիր են անով, որ կներկայացնեն հայերենի հնագույն ձևը, այսպես օրինակի համար ով, ոյր, ուր, ինչ ունեին նախապես k^w ձայնը, որ հետո ինկավ. Ղարաբաղի հ ձայնը ասոր շարունակությունն ըլլալու է»³:

ա) Ղրբ. բ. հ.—գրբ. 0—հ. —հ. *k^u—

հինչ—ինչ—*k^ui—+նչ

հուր—ոյր—*k^uosli—+ր

հով, հով—ո(վ)—*k^uo—

հուր—ուր—*k^uu—r

Սրանց պետք է միացնել թերևս

հունց—ոնց—*k^uo—+նց

հոլոլ «անիվ. (մնկ.) սայլ»—(—)—*k^uel— «պտտ(վ)ել», որից հ. իսլ. hjól, hvél, հ. անգլ. hweol, hweowol «անիվ», հ. իսլ. cúl «կառք», ուսու. колесо «անիվ»:

բ) Ղրբ. բ. հ.—գրբ. 0—հ. —հ. *p—

հըլիվուր (հլէ-, -վըէր, -վօր)—ալետր—*poli(o)—+ւոր

գ) Ղրբ. բ. հ.—գրբ. 0— —հ. —հ. *s—

հավազ—աւազ—*sə-bh—

հարիէլ (-իլ)—արբի, արբենալ—*sɛbh—

հընցնէլ—անցնել—*snt-s—

2) Առանձին դեպքերում թերևս գործ ունենք նախահնդեվրոպական կոկորդայինի (լարինգալի) մնացուկի հետ, որ գրաբարում և հնդեվրոպական շատ ուրիշ լեզուներում ընկել է՝ պահպանվելով մասամբ խեթալուական լեզուներում. հազվադեպ այն հետքեր է թողել նաև գրաբարում՝ փառ պապա—խեթ. ḫiḫḫaš, լիկ. χιχχα «պապա»:

Ղարաբաղի և մի շարք այլ բարբառների հ-ն առանձին դեպքերում զուգահեռ ունի խեթերենում.

հըն(դ)—(հընդեր, հընդեր)—ըն(դ)—(ընկեր, ընտրել)—խեթ. hant.

Այլ դեպքերի համար համտ.

հանդ—անդ—*(H)andh—

հաննի(նը) (անէղ)—աղեղն—*(H) ol-(?)

հըլէլուկ, (հ)իվըլուկ—աւելուկ—(H) obhel—

հդէ—ուդի—*(H)ulio—

հըղօկ (-օք)—ուղուկ «թղալափ»—*(H)öl—

(հ)ուսում—ուսումն—*(H)euk—

³ Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, Մոսկվա—Նոր Նախիչևան, 1911, էջ 65:

3) Առանձին դեպքերում հավելություն հ-ի դոյությունը կարելի է բացատրել փոխատու լեզվի օգնությամբ.

հարզակ—արձակ—ավեստ. harəz-, պրթ. hyrz

հնւշ, օշ—ուշ—մ. պ. (h)ōš

հուլէռնը (—օռնը)—ուլոռն—ակկադ. huulluru

4) Այլ դեպքերում բառերի ծագումը որոշ չէ կամ տվյալները հակասական են՝ հաքի—ազի, հրմանշիլ—ամաշիլ, հօռի (—է)—ուռի և այլն:

Հնդեվրոպական e և o ձայնավորները ռեզայիններից առաջ հայերենում սովորաբար փոխվում են ի-ի և ու-ի՝ *penk^ue > քինգ, *senos > քին, dom > տուն, *ponē > քուն և այլն: Գրական աղբյուրներում ավանդված ու հավանաբար բարբառային ծագում ունեցող որոշ բառերում նկատելի են բացառություններ. այսպիսին է, օրինակ, դոն «պաքսիմատ» բառը, նման բառերով հարուստ է մասնավորապես Ղարաբաղի բարբառը. հմմտ. լէմ «ատամ», լեմուկ «ատամները թափած» (հ.-հ. *lem-), քոնքոբալ (հուն. τονοροβύλω) «քրթմնշալ, մրթմրթալ, փնթփնթալ, կլոնդրակ գնդակ»⁴, Հարց է ծագում՝ այս դեպքում գրաբարյան ին-ով, իմ-ով, ուն-ով, ում-ով ձևերի դիմաց Ղարաբաղյան էն-ով, էմ-ով, օն-ով, օմ-ով ձևերը արդյոք արխարզմ. նե՞ր են, թե՞ հնչյունական ուշ փոխառություններ, մանավանդ որ այդ ձևերը հաճախ ավելի մոտ են թվում հնդեվրոպական ձևերին. այսպես, Ղարա-

բաղյան քինգ ձևը ավելի մոտ է հնդեվրոպական penk^ue-ին, տոն-ը՝ հրեդեվրոպական *dom-ին, քան գրաբարյան քինգ-ը և տուն-ը: Այն հանգամանքը, որ Ղարաբաղի բարբառում ի-ի դիմաց է ' ու-ի դիմաց օ, օ նկատվում են ոչ միայն ն-ից ու մ-ից առաջ, այլև ուրիշ դեպքերում, և որ դրանց սկզբունականները շատ դեպքերում գալիս են բուն հնդեվրոպական *i-ով ու *u-ով դեպքերից, մեզ հիմք է տալիս այս հարցին բացասական պատասխան տալու. հմմտ. հղէ—ուղի—հ.-հ. *(H)uiliō -, մօկնը—մուկն—հ.-հ. mūs-(հանգլ. mūs) և այլն:

Ինչպես հայտնի է, Ղարաբաղի բարբառը պահպանել է գրաբարի ն-ով վերջացող հիմքերը՝ իրեն հատուկ ձևափոխությամբ, մինչդեռ արևելահայ և արևմտահայ գրական լեզուները և շատ բարբառներ բառավերջային այդ ն-կորցրել են՝ սովորաբար պահպանելով միայն ոչ վերջնային դիրքում. հմմտ. մուկն—մօկնը, մօկուկը/ու, ծունգն—ծօնգնը (ծօնքը), ծօյնը և այլն: Դեռ ավելին. նկատելի է, որ Ղարաբաղի բարբառում և մի շարք այլ բարբառներում —ն-ով հիմքերը ավելի մեծ տարածում են ունեցել, քան գրաբարում. այդ բարբառներում, ի տարբերություն գրաբարի, առկա են մի շարք բառերի ն-ով հիմքեր: Եթե նկատի առնենք միայն Ղարաբաղի բարբառը, ապա կարելի է բերել հետևյալ օրինակները⁵.

անդամ—անդէմնը «անասունի ազդր»⁶

բծիծ «ոչիլ»—պծէղնը «ծետուկ. ճանճի որդ».

բոռ—պօռնը, պուռնը «իջամեղու»

բորբոս—փրփէշնը

բոինչ «մի տեսակ պտուղ»—պոէշնը

թուզ—թօզնը

թութ—թօթնը

խէժ—խէժնը

⁴ Գ. Ռ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 274:

⁵ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, էջ 416, Լ. Պետրոսյան, Գոյական թվի կարգը հայերենում, Երևան, 1972, էջ 231:

⁶ Համաբանական հավելում. անդամ բառի աղբյուրը հավելական ն-ն չունի. հմմտ. պրսկ. andam. օ չունեն նաև իրանականից փոխառված ասոր. և արաբ. ձևերը:

խլէզ—խլէզներ

հակ—հակներ «պայուսակի մի աչքը»

ճիւղ—ճողնը

մամուռ—մամուռներ

սինձ—սէզներ

Նշենք, որ բառավերջի և-ն մասամբ դալիս է հնդեվրոպական *-ն-ով և *-մ-ով հիմքերից, մասամբ հարցականի համապատասխան վերջավորութիւնից, մասամբ փոխառյալ բառերի -ն-ից, մասամբ էլ, թերեւ, տարածվել է համաբանորեն: Բերված բառերը հիմնականում հնդեվրոպական ժաղում չունեն, և դրանց համար կարելի է ենթադրել համաբանական տարածում. հմմտ. ծօռնը (թօռնը ձևի կողքին), կէմնը և այլն:

Թուզե-ի համար թերեւ կարելի է ենթադրել հուն. τῦλον -ին մոտ աղբուր (*tughon?):

Ինչպես տեսանք, Հ. Աճառյանը Ղարաբաղի բարբառի ծագումը դնում է XII դ. հատկապես այն բանի հիման վրա, որ բ, գ, դ, ձ, ջ ձայնեղների խլացումը և վերածումը ալ, ա, կ, ծ, ց-ի ընդգրկում է բնիկ հայերեն բառերը և հին փոխառութիւնները, բայց չի ընդգրկում թյուրքական նորագույն փոխառութիւնները՝ բագ, բօլ և այլն: Աճառյանը նկատի ունի, որ ձայնեղների խլացման օրենքը գործել է մինչև XII դարը՝ «թուրքերի Հայաստան գալուց առաջ» և դադարել է գործելուց այդ դարից հետո:

Սակայն հարցն այնքան էլ հեշտ չէ լուծել, ինչպես կւործում է Հ. Աճառյանը: Այն հանգամանքը, որ բնիկ հայերեն բառերում և հին փոխառութիւններում ձայնեղները խլանում են, կարելի է բացատրել երեք կերպ. 1) նախքան հին փոխառութիւնների մուտքը, Ղարաբաղի բարբառում արդեն կատարվել էր ձայնեղների խլացում, բառասկզբում կային միայն խուլեր, բայց ոչ ձայնեղները, և այդ բարբառը փոխառյալ բառերում բառասկզբնային ձայնեղները դարձնում էր խուլեր. XII դարից սկսած վիճակը փոխվում է՝ օտար աղբեցութեամբ հանդես են գալիս բառասկզբնային ձայնեղներ, և հիշյալ սահմանափակութիւնը վերանում է. 2) հին փոխառութիւնների ժամանակ Ղարաբաղի բարբառում կային բառասկզբնային ձայնեղներ, բայց նախքան XII դարը, օրինակ՝ IX—XI դարերում, տեղի է ունենում դրանց խլացում որն ընդգրկելով բոլոր բառերը՝ դադարում է գործելուց, և XII դարից սկսած նոր փոխառութիւններում եղած բառասկզբնային ձայնեղները մնում են ձայնեղ. 3) վերջին ժամանակների որոշ հետազոտութիւններում՝ խստորեն նշվում է այն միտքը, որ հնչութային հակադրութիւնների դեպքում մենք որոշ չափով արհեստահանորեն ենք խոսում միայն մեկ հատկանիշի (օրինակ՝ խուլի և ձայնեղի)՝ որպես տարբերիչի մասին. իրականում գործ ունենք արտասանական տարբերութիւնների խմբի հետ, որոնցից մեկը հետազոտողների համար աչքի ընկնող է, ընդ որում տարբեր լեզուներում տարբերութիւնները կարող են գնահատվել տարբեր ձևով. այսպես, ձայնեղները սոփորաբար լինում են թուլ (lenes) խուլերը՝ ուժեղ (fortes), բայց կարող են լինել ուժեղ ձայնեղներ և թուլ խուլեր, տարբեր կարող է լինել խուլերի ձայնածեղութիւնը (գոտայութիւն) աստիճանը. սրա հետ կապված է, որ վրացերենի ք-թ հակադրութիւնը գնահատվում է որպես ձայնածեղայինի և ոչ ձայնածեղայինի, հայերենում՝ որպես խուլի և շնչեղ խուլի հակադրութիւն. այսպիսով, հնարավոր է, որ Ղարաբաղի բարբառի խուլերը համեմատաբար թուլ լինեին, և ձայնեղներն ընկալվեին որպես թուլ խուլեր:

Այս տեսակետից չենք կարող խիստ կատեգորիկ լինել ձայնեղների խլացման ժամանակը որոշելիս, ինչպես այդ անում է Հ. Աճառյանը: Նկատի

առնենք, որ նա դեռ հետևողականորեն չէր կիրառում լեզվաաշխարհագրության սկզբունքները և ծանոթ չէր ժամանակակից հնչույթաբանությանը: Այս կապակցությամբ նշենք երկու հանգամանք ևս. 1) ժամանակակից լեզվաաշխարհագրությունը սովորեցնում է, որ ամեն մի փոփոխություն երկար ժամանակ կարող է լինել սաղմնային վիճակում ու հետագայում արագ տարածվել, և որ խոսելով հնչյունական օրենքի գրանցման ժամանակի մասին չի կարելի ասել, թե այն չի եղել հարևան վայրերում ու սահմանափակ տարածքներում. 2) ժամանակակից լեզվաբանության տարբերակայնության (վարիատիվության) սկզբունքը հավաստում է, որ լեզվի համար բնորոշ է տարբերակային ձևերի առկայությունը, և այս կամ այն տարբերության սաղմերը կարելի է գտնել ավելի վաղ վիճակներում:

Այս բոլորը նկատի ունենալով չպետք է զարմանանք, որ Դիոնիսիոս Թրակացու քերականության թարգմանության հայ անանուն մեկնիչը (V դար. ըստ ոմանց՝ VII դար) խոսում է բազմակ բառի պազմակ և փազմակ տարբերակների մասին⁹, և որ հետևաբար, ձայնեղների խլացման երևույթը արձանագրվել է դեռևս V կամ VII դարում: Այլ կերպ ասած՝ Արցախում, Սյունիքում, Վասպուրականում դեռ V դարում եղել է այդ երևույթը:

Եթե պախրէ (ուշ պախրայ) «տավար, նախիր, ուտելիք, պաշար, ունեցվածք, ապրանք, դրամ» բառը, որը հանդիպում է V դարից սկսած, փոխառություն է ասոր. baqrā «նախիր» բառից, ապա սա ձայնեղների խլացման երևույթի վաղ արտահայտություններից մեկն է:

Ղարաբաղի բարբառի համար ամենաբնորոշ երևույթներից մեկը քմայնացումն է: Ե՞րբ է այն հանդես եկել: Ոմանք այն կապում են թյուրքական ազդեցության հետ: Սակայն հայ բարբառներում քմայնացումը՝ 1) կատարվում է այնպիսի դիրքերում, որոնք թյուրքական լեզուների համար բնորոշ չեն, մասնավոր, որ այդ լեզուներում ձայնավորների քմայնացման երևույթը կապված է ձայնավորների ներդաշնակության (սինհարմոնիզմի) երևույթի հետ. 2) տարբեր բարբառներում արտահայտված է տարբեր չափերով և տարբեր առանձնահատկություններով. 3) առկա է նաև այնպիսի վայրերում, որոնց համար թյուրքական ազդեցությունը բնորոշ չէ: Ժիշտ է, կան բարբառներ, որոնցում քմային ձայնավորներն առկա են միայն փոխառյալ բառերում, բայց Ղարաբաղի բարբառը դրանց թվին չի պատկանում:

Հ. Աճառյանը Ղարաբաղի, Վանի և մի շարք այլ վայրերի քմայնացման երևույթը համարում է ներքին փոփոխության արդյունք և սահմանում է մի օրենք, ըստ որի Վանի, Ղարաբաղի և մի շարք այլ բարբառներում քմային ձայնավորները հանդես են գալիս խլացած ձայնեղների մոտ: Նշենք, սակայն, որ Աճառյանի օրենքի ձևակերպման մեջ որոշ երկվություն կա. մի կողմից՝ ձայնավորների քմայնացումը կապում է բաղաձայնների թուլացման հետ (սփանի բարբառում ա ձայնավորը, գտնվելով գրաբարի թրթռուն պայթականից առաջացած խուլի մոտ, դառնում է ա, իսկ խուլից առաջացած խուլի մոտ մնում է ա)¹⁰, մյուս կողմից՝ կարծես հակված է բաղաձայնների խլացումը կապելու ձայնավորների քմայնացման հետ և տալու հետևյալ հաջորդականությունը՝ 1) գա—կա, 2) գա—կա, 3) կյա—կա¹¹, իրականում նշենք, որ երբեմն գործ ունենք երկու տարբեր երևույթների հետ, երբեմն էլ իրոք առկա է դրանց միջև որոշակի կապ. 1) որ ձայնավորների քմայնացու-

⁹ G. B. Djahukian, The variational model of Indo-European consonantism (Historical Linguistics, 1990, № 1).

¹⁰ Հմմտ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Л., 1915, с. 149; Գ. Բ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V—XV դդ.), Երևան, 1954, էջ 154:

¹¹ Հ. Աճառյան, Վանի բարբառը, Երևան, 1953, էջ 20:

¹² Նույն տեղում:

մը կարող է տեղի ունենալ անկախ խլացումից, երևում է մի կողմից՝ բառակցքի ձայնավորների քմայնացման փաստերից (հմմտ. ասել—ավիլ. ավել), մյուս կողմից՝ Ազուլիսի բարբառում և նույնիսկ Վանի բարբառի որոշ բառերում չխլացած բաղաձայնների մոտ քմային ձայնավորների առկայությունից. 2) որ ձայնեղների խլացումը կարող է հանգեցնել այդ բաղաձայնների և նրանց մոտ գտնվող ձայնավորների քմայնացման, երևում է մի կողմից՝ գերմանական բարբառների համապատասխան փաստերից, որոնք Հ. Աճառյանին հայտնի չեն եղել, մյուս կողմից՝ հայ բարբառներում ձայնեղների շնչեղ խլացման ժամանակ ևս նկատվող քմայնացումից, որ առաջ չի բերում հաջորդ ձայնավորի ուժեղ քմայնացում (հմմտ. բաբի—փաբի, որտեղ փ-ն որոշ քմայնացում ունի):

Երբ է տեղի ունեցել քմայնացումը: Իհարկե ոչ XI դարից հետո: Քրենարկելով Դիոնիսիոս Թրակացու քերականության հայերեն թարգմանությունը (V դար)՝ լծորդություններին վերաբերող «գեամ, գեաս. գեայ. եւ ըստ լեզուաց ռ(1)իւ, որգոն գամ եւ յղամ» հատվածը՝ Ն. Ադունցը գրում է. «Դժվար չէ կոահել, որ խոսքը, ի միջի այլոց, Ղարաբաղի և զոկերեն բարբառների մասին է»¹²: Այս նույն կարծիքն է հայտնում նաև Հ. Աճառյանը ավելի ուշ¹³:

Դրաբարում ավանդված ծանոթ և անծանոթ ծագման մի շարք բառերի իւ-ն, ոյ-ը, մանավանդ երբ դրանք հանդիպում են որպես գրության տառատեսակներ, որոշ դեպքում արտացոլում են փոխատու լեզուների և, թերևս, բարբառային որոշ տարածքների քմայնացած ու ձայնավորը:

Սակայն պետք է կարծել, որ երևույթն ավելի հին է և արտացոլում է գտնի ուրարտական արձանագրություններում ավանդված մի շարք հատուկ անունների, հատկապես տեղանունների գրության մեջ¹⁴: Որ Վան-ի, Վան և Գառնի-ի Գյառնի արտասանություններն են ընկած Blaini և Giarniani գրությունների մեջ, խիստ հավանական է. բայց հմմտ. թերևս, նաև Diul'a, Qluna, Libluni, Tarluni (հմմտ. Դարսյնք) և այլն:

Հայերենը իր զարգացման վաղ շրջաններում Ե-ով և Ղ-ով սկսվող բառեր չունի. եթե բնիկ հայերեն բառերը հնչյունական տարբեր փոփոխությունների պատճառով պիտի սկսվեին Ե-ով և Ղ-ով կամ փոխատու լեզուներում բառերն սկսվում էին դրանցով, տեղի էր ունենում ե կամ ա հենատառային ձայնավորի հավելում¹⁵: Սակայն նկատելի է, որ դրաբարի և բարբառների միջև երբեմն տարբերություններ կան. մասնավորապես հաճախ են այն դեպքերը, երբ զրաբարյան ե-ի դիմաց բարբառներում առկա են ա-ով ձևեր, երբեմն էլ ընդհանրապես բացակայում է որևէ նախահավելված. վերջին դեպքը կարող է լինել նաև երկրորդական՝ սկզբնական ձայնավորի անկման հետևանք, բայց առաջինը պետք է համարել հին երևույթ. հմմտ. Դարսբաղի բարբառում՝ եղբայր—ախայէր, եղունգն—ղէնգ, ղեյնը:

Մի շարք դեպքերում զրաբարի ե-ի դիմաց Ղարաբաղի բարբառում առկա է ա, բայց նա կարող է լինել ուշ երևույթ՝ ձայնավորների ներդաշնակությունից: Հեւեւանք՝ երաւ—աբաւ, երաշտ—աբաշտ և այլն:

Են պետք է համարել նաև ձայնավորների հերթագայության որոշ արտասովոր ձևեր: Թեև Ղարաբաղի բարբառում ձայնավորների ներդաշնակություն և այլ փոփոխությունների պայմաններում այդ հերթագայությունները

¹² Н. А. ДОНЦ, 3-й. азбу., էջ CLXXIV:

¹³ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, էջ 385:

¹⁴ Այսպիսի երկու փաստ նշել է Ա. Հանեյանը իր գիտական մի ղեկուցման մեջ (տե՛ս Օրիգամասարդ լեզվաբանների հանրապետական հինգերորդ գիտաժողովի նյութեր, Երևան, 1986, էջ 64):

¹⁵ Հ. Աճառյանը գրում է. «Այս երկու հավելվածների պայմանները մեզ լավ հայտնի չեն» (Հայոց լեզվի պատմություն, հ. 2, էջ 414): Վերջին ժամանակներս (*Annual of Armenian lit

1990) փորձ է արվել այդ պայմանները ճշտելու:

հաճախ դժվար է բացահայտել, բայց որոշ դեպքերում կարելի է խոսել դրանց արտացոլումների մասին.

լեսուլ—լոսվիլ «մաշվել»

ճեստ ցեղ, սերունդ—ճօտ

քերել—քիրել (քիրիլ) և քօրիլ

Գրաբարի սովորական -ֆ-ով հոգնակի ձևերի կողքին դեռևս հին շրջանում առկա էին հոգնակի-հավաքական ձևեր, որոնք վկայված են գրաբար տեքստերում և դեռ գործածական են բարբառներում.

-ան (իշան, ձիան)— -ան (ծիլան, իշան—թիլան, ծովան (ծուվան), լուվան (լուվան). հանդիպում է նաև -ֆ հոգնակներում.

-անի (աւագանի, կանանի) — -նէ (ըսղնէ, ասսեղներ)։

Նշենք, որ՝ 1) գրաբարում ավանդված -աի հոգնակները (մաեկաի, ծակաի) պահպանվել է -ա պարունակող որոշ հոգնակներների մեջ՝ -աեմֆ, -աուեմֆ (նեգյեւաեմֆ, նեգյեւաուեմֆ, որոնք չեն ծագում -աա > -օա-ից, ինչպես կարծում է Կ. Դավթյանը)¹⁶, 2) -էր և -նէր հոգնակներների գրական լեզվի -եւ-ի և նեւ-ի նման իրենց հիմքերն ունեն դեռևս հին (գրաբարի) շրջանում հանդիպող -եաւ, -նեաւ մասնիկների մեջ։

Բարբառներում, այդ թվում նաև Ղարաբաղի բարբառում երբեմն պահպանված են գրաբարի ոչ արմատական ձևերի դիմաց արմատական ձևեր՝

զգենուլ—կէնալ (առանց զ-ի)

կոճել խփել, փշրել—կոճէլ «մանրել», կոճ «մանր կտոր»

ճառագայթ—ճաքել (<ճառագել)

պեպէն—պէն

Կան բարբառային մի շարք ձևեր, որոնք պահպանում են գրաբարյան ձևերին զուգահեռ հին և անկախ ձևեր.

ծուղակ—ծղարակ

կեղեւ—քլէվ

նապաստակ—ըլբաստրակ

պատուհան—պտուհան

փայծաղն—փածէղնը

ОБ ОБРАЗОВАНИИ АРЦАХСКОГО (КАРАБАХСКОГО) ДИАЛЕКТА

Г. Б. ДЖАУКЯН

Р е з ю м е

Говоря о времени образования армянских диалектов и касаясь карабахского диалекта, Р. Ачарян относит его к XII в. Автор статьи защищает свой тезис об образовании фонетических, грамматических и лексических особенностей армянских диалектов, в том числе и карабахского диалекта, в течение всей истории армянского языка. В связи с этим рассматриваются такие особенности карабахского диалекта, какими являются наличие протетического *h* в начале некоторых слов, начинающихся с гласных, сохранение и даже расширение именных основ на -п, оглушение звонких взрывных и аффрикат, распространённость палатализации гласных и согласных, наличие несвойственных грабару форм чередования и корневых форм и т. д.

¹⁶ Կ. Դավթյան, լեզվային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966, էջ 93։